ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 11 սեպտեմբերի 2018թ.

Նիստին մասնակցում էին ավագանու 12.03.2018թ. N 22-Ա որոշմամբ ստեղծված գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահ Վահրամ Ապրեսյանը, անդամներ Սլավիկ Հարությունյանը, Գեորգի Աղաջանյանը և Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ Վահրամ Ապրեսյանը:

Օրակարգում՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Բյուրեղավան համայնքի ներկայացուցիչներ առաջադրելու մասին:

Վահրամ Ապրեսյանը ներկայացրեց, որ Կոտայքի մարզպետի 11.07.2018թ. N 1/13.2/3130-18 գրության համաձայն՝ մարզի տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններում երիտասարդական քաղաքականություն իրականացնելու, տվյալ մարմիններում երիտասարդների պպտշաճ մասնակցությունը խթանելու նպատակով նախաձեռնվել է Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմի համալրման գործընթաց: Խորհրդի կազմում պետք է ընդգրկվի երկու ներկայացուցիչ, որոնցից մեկը ներկայացնում է պետական հատվածը, մյուսը՝ ոչ պետական հատվածը: Ինչպես տեղեկացրեց Վ. Ապրեսյանը, համայնքի ղեկավարի օգնական Մերի Կարապետյանը խորհրդի կազմի համալրման մասին հայտարարություն է տեղադրել Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական http://www.byureghavan-kotayk.am, ոչ պաշտոնական http://www.byureghavan.am կայքերում, Բյուրեղավանի համայնքապետարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջում, ինչպես նաև Բյուրեղավանի վարչական շենքի՝ հայտարարությունների համար նախատեսված ցուցափեղկում: Խորհրդի կազմի ոչ պետական հատվածի համար դիմել է մեկ հոգի՝ Բյուրեղավան քաղաքի բնակիչ Անահիդ Արմենի Խաչիկյանը (ծնված՝ 02.05.1999թ.): Նա ԵՊՀ-ի Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանող է, ունի երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերի, միջոցառումների մասնակցության փորձ (<<Ավրորա>> մարդասիրական մրցանակաբաշխության կամավոր, Հայաստան – Սփյուռք 6-րդ համաժողովի կամավոր, <<Ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները>> ծրագրի մասնակից, Համահայկական կամավորական միության անդամ):

Ըստ պահանջի, խորհրդի պետական հատվածը ներկայացնելու է համայնքի ղեկավարի տեղակալ Միշա Եղիազարյանը:

Քննարկումից հետո որոշվեց՝

1.Հաստատել խորհրդի ոչ պետական հատվածի համար դիմած Անահիդ Արմենի Խաչիկյանի թեկնածությունը, քանի որ միայն նա է դիմել և նրա տվյալները լիովին համապատասխանում են ներկայացվող պահանջներին, հավանություն տալ <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Բյուրեղավան համայնքի ներկայացուցիչներ առաջադրելու մասին>> որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ Վահրամ Ապրեսյան

Սլավիկ Հարությունյան

Գեորգի Աղաջանյան